

Լիլիթ Միքայելյան

Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դասախոս

ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԳՐԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Երվանդաշատը հին Հայաստանի թագավորական նստավայր և երկրի քաղաքական կենտրոն է դարձել մ.թ.ա. III դարում: Այն գտնվում էր պատմական Հայաստանի Այրարատ աշխարհի Արշարունիք (հնում Երվանդունիք, Երասխաձոր) գավառում, Արաքս և Ախուրյան գետերի միախառնման վայրում: Այժմ հին Երվանդաշատը և նրան հարող տարածքները գտնվում են Հայաստանի և Թուրքիայի միջև անցնող սահմանամերձ գոտում: Պատմական Արշարունիք գավառի մեծ մասն այժմ Թուրքիայի տարածքում է: Հայաստանի Հանրապետության սահմանում գտնվում է միայն նրա արևելյան ծայրամասը, որն ընդգրկում է Արմավիրի մարզի Երվանդաշատ և Բազարան գյուղերի տարածքները (նկ. 1): Սովետական և ետսովետական տարիներին փակ գոտում լինելու պատճառով այստեղ գտնվող հուշարձանների հնագիտական ուսումնասիրությունը գրեթե անհնարին էր: Պատմական Երվանդաշատի տեղադրությունը որոշվել է միմիայն մասնագետների կարճատև այցելությունների և աղբյուրագիտական տվյալների հիման վրա: Առաջին ուսումնասիրություններն այդ ուղղությամբ կատարել են Ալիշանը (Ալիշան, 1890, էջ 55-69), Թ. Թորամանյանը (Թորամանյան, 1942, էջ 229-236, 283-285) ու Բ. Առաքելյանը (Առաքելյան, 1965, էջ 83-94):

2005-2012 թթ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախմբի կողմից (ղեկավար՝ Ֆելիքս Տեր-Մարտիրոսով) Երվանդաշատ և Բազարան գյուղերի տարածքներում իրականացվել են սիստեմատիկ հնագիտական և հետախուզական աշխատանքներ: Պեղվող հիմնական հուշարձանը Երվանդ թագավորի մ.թ.ա. III դ. հիմնադրված որսորդական պալատն է, որը գտնվում է Արաքսի ձախ ափին, երկու գետերի խառնարանից մի փոքր հարավ: Կառույցի տարածքը համապատասխանում է Սովսես Խորենացու նկարագրած, թագավորական որսի համար նախատեսված «Անտառ Ծննդոցի» տարածքին:

Ներկայումս ուսումնասիրվող պալատական կառույցը միայն մի մասն է պատմական Երվանդաշատի՝ Երվանդ թագավորի նստավայրի, որը ներկայացնում էր պաշտպանական, կրոնական, տնտեսական և որսորդական կենտրոնների համալիր (նկ. 2): Վերջինս տիպաբանորեն նույնանում է հին արևելյան պարադիզ-դաստակերտ կոչվող կենտրոնների հետ (Тер-Мартirosов, 1986, с. 83-85): Որսորդական պալատի պեղումների ընթացքում բացահայտվել են չորս հիմնական մշակութային շերտեր (նկ. 3): Վաղագույն ստորին շերտը պատկանում է Երվանդյան շրջանին (մ.թ.ա. III-II դ. սկիզբ): Նրան անմիջապես հաջորդում է Արտաշես թագավորի կառավարման ժամանակահատվածով թվագրվող շերտը (մ.թ.ա. II դ.), երբ պալատը վերածվել է ամրոցի: Երրորդը պարթևական գերիշխանության շրջանին համապատասխանող շերտն է (մ.թ.ա. II դ. վերջ – I դ.), իսկ վերջինը՝ հասուն միջնադարյան շերտը, առկա է միայն հուշարձանի որոշ մասերում, որին կանդրադառնանք սույն աշխատանքում:

Վերոհիշյալ պալատական համալիրի ուսումնասիրությանը զուգահեռ՝ արշավախումբը վերջին տարիներին հայտնաբերել, փաստագրել և հետազոտել է տարածաշրջանի այլ ժամանակաշրջանների հուշարձաններ: Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել Երվանդաշատի և շրջակա տարածքների ուսումնասիրված միջնադարյան հուշարձանները և պատմաաշխարհագրական իրավիճակը միջնադարում:

Նախ կարճ անդրադառնանք Արշարունիքում Երվանդ թագավորի հիմնադրած կենտրոնների պատմությանը, որոնք շարունակել են գոյատևել միջնադարյան շրջանում և հիշատակվել են պատմիչների կողմից որպես միջնադարյան բնակատեղիներ:

Հիմնական տեղեկություններն անտիկ Երվանդաշատի մասին ստանում ենք Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» գրքից: Խորենացին գրում է, որ Երվանդ թագավորը որոշում է իր նստավայրն Արմավիրից տեղափոխել մեկ այլ տեղ՝ Արաքսի հունի փոփոխման պատճառով, ինչպես նաև իր համար ավելի ապահով վայր գտնելու նպատակով: Արաքսի և Ախուրյանի խառնարանի մոտ վեր խոյացող անմատչելի ժայռի վրա Երվանդը կառուցում է իր ամրոցը: Ապա բերդից դեպի հյուսիս քառասուն ասպարեզ հեռավորության վրա, Ախուրյան գետի աջ ափին, Երվանդը հիմնում է ծխական նշանակություն ունեցող Բագարան քաղաքը, ուր տեղափոխում է Արմավիրում եղած բոլոր կուռքերը: Բարձրադիր ամրոցից հյուսիս-արևմուտք, մինչ գետերի խառնարանը տարածվող Արաքսի ընդարձակ հովտում թագավորը կառուցում է Երվանդակերտ դաստակերտը: Վերջինս թագավորին և արքունիքին ապահովող գյուղատնտեսական կենտրոնն էր իր բազմաթիվ բնակչությամբ, բերրի այգիներով ու ծաղկանոցներով (Խորենացի, 1968, էջ 174-180):

Արշարունիքը մինչև մ.թ. III դ. վերջ - IV դ. սկիզբ եղել է արքունական տարածք, ապա Տրդատ III թագավորի կողմից, սահմանակից Շիրակ գավառի հետ միասին, նվիրաբերվել է թագավորական տոհմին ազգակից Կամսարականների իշխանական տանը: Համաձայն Խորենացու հաղորդած տվյալների՝ այդ տարածքները Կամսար իշխանը և նրա որդի Արշավիրը թագավորից պարզև են ստանում քրիստոնեություն ընդունելուց անմիջապես հետո: Արշավիրն էլ, շատ սիրելով Երասխաձոր գավառը, այն իր անունով կոչում է Արշարունիք (Խորենացի, 1968, էջ 229): Խորենացին որպես Կամսարականների ոստան է նշում Երվանդաշատ քաղաքը և Արտագերս ամրոցը: Վերջինս գտնվում էր Արշարունիքի կենտրոնական մասերում, Երվանդաշատից հյուսիս-արևմուտք, այժմ Թուրքիայի տարածքում՝ տեղադրությունը ստույգ չէ (Հայաստանի և հար. շրջ. տեղ. բառ., հ. I, 1986, էջ 488):

Մ.թ. IV դ. կեսերին Արշակ II թագավորի պայքարը նախարարների կենտրոնախույս ուժերի դեմ վերջացավ թագավորի կողմից Կամսարականների ցեղի բնաջնջումով: Դրանից հետո Կամսարականների հողատիրույթներն անցել են արքունիքին մինչև V դ. վերջերը, երբ ողջ մնացած Կամսարականների ժառանգ Ներսեհ Կամսարականը կարողանում է ետ վերցնել բռնագրավված Արշարունիքն ու Շիրակը: Սակայն IX դ. սկզբին արդեն թուլացած Կամսարականները հարկադրված են լինում Շիրակն ու Արշարունիքը վաճառել Բագրատունիների իշխանական տանը՝ Աշոտ Մսակեր իշխանին (806-826 թթ.): Այս տարածքները շուտով դառնում են Բագրատունիների թագավորության կորիզը (Մաթևոսյան, 1997, էջ 70-71):

Ինչպես վերը նշվեց, անտիկ Երվանդաշատը բաղկացած էր որոշակի գործառույթներ ունեցող առանձին կենտրոններից, որոնք գտնվում էին իրարից մի քանի

կմ. հեռավորության վրա (նկ. 2): Երվանդ թագավորի տնտեսական կենտրոնի՝ Խորենացու նշած «Երվանդակերտ դաստակերտի» տեղում է, հավանաբար, հետագայում ձևավորվել վաղմիջնադարյան քաղաքը: Վերջինիս մասին տեղեկություններ է հաղորդում Փավստոս Բուզանդը, երբ պատմում է 360-ական թթ. Շապուհ II-ի կողմից Հայաստանի քաղաքների գրավման և բնակչության գերեվարման մասին: Բուզանդը գրում է՝ «Առան Երվանդաշատ մեծ քաղաքն էլ. այստեղից դուրս բերին քսան հազար տուն հայ և երեսուն հազար տուն հրեա, իսկ քաղաքը հիմնահատակ կործանեցին» (Բուզանդ, 1968, էջ 219): Պատմիչի տվյալներով մոտ կես միլիոնի հասնող քաղաքի բնակչությունը թերևս ընդգրկում էր Երվանդաշատի և նրան հարող տարածքների բնակիչներին: Քաղաքի հիմնական մասն, ըստ ամենայնի, տեղադրված է եղել անմիջապես մինչև Արաքսի և Ախուրյանի խառնարանն ընկած Արաքսի հովտում, վերջինիս ձախ ափին (Тер-Мартirosов, 2008, с. 13-15): Նույն շրջանի սահմանից այս կողմն ընկած տարածքում վաղմիջնադարյան շերտերի առկայությունը հնարավոր է ժամանակակից Բագարան գյուղի տարածքում, որը գտնվում է Ախուրյանի գետաբերանի մոտ, նրա ձախ ափին, խառնարանից ոչ հեռու: Այսօր գյուղի տարածքը բլուրներով շրջապատված բերրի հարթավայր է, որը երկու մասի է բաժանվում դեպի Արաքսն իջնող Ախուրյանի կիրճով: Խիստ հավանական է, որ մինչև այս վայրը տարածվել է Բյուզանդի հիշատակած Երվանդաշատ քաղաքն իր արվարձաններով:

Ժամանակակից Բագարան գյուղի տարբեր մասերում հետախուզական աշխատանքների շնորհիվ հայտնաբերվել են բազալտե խոշոր, անմշակ քարերով կառուցված պատաշարերի հիմքեր (դրանց թվագրությունը դեռևս հստակ չէ): Գյուղացիներից շատերի վկայությամբ իրենց այգիներում գտնվել են կարասների մնացորդներ և այլ իրեր, որոնք, ըստ ամենայնի, պատկանում են միջնադարյան ժամանակաշրջանին: Բագարանի և հարևան Երվանդաշատի տարածքից տեղացիները գտել և արշավախմբին են հանձնել երկու բյուզանդական պղնձե դրամ (նկ. 11,12): Վերջիններս նույնատիպ են և պատկանում են Բյուզանդիայում X դ. վերջից մինչև XI դ. վերջը հատվող ամանուն ֆոլիաներ կոչվող դրամների տեսակին: Նրանց դիմերեսին պատկերված է Քրիստոսը, իսկ դարձերեսին քառատող գրություն է՝ «Հիսուս Քրիստոս թագավոր թագավորաց»¹: Դրամներն, անշուշտ, վկայում են տվյալ տարածաշրջանի առևտրական աշխույժ կապերի մասին:

Այսպիսով, միջնադարյան Երվանդաշատ քաղաքի ճշգրիտ տեղադրությունը և նկարագիրը պարզելու համար անհրաժեշտ են հնագիտական ուսումնասիրություններ, որոնք դեռևս անհնարին են քաղաքի ենթադրվող հիմնական մասում: Ժամանակակից Բագարանում դեռ հնագիտական աշխատանքներ չեն կատարվել, ուստի տեղի վաղմիջնադարյան շերտերի, նաև ավելի ուշ բնակեցման սահմանների մասին տեղեկությունները բավարար չեն որոշակի եզրակացություններ անելու համար:

Բագարան գյուղի շրջակա տարածքներից հայտնաբերվել են մեկ տասնյակից ավելի խաչքարեր², որոնցից երեքն արձանագիր են և թվագրվում են XIII դ. (նկ. 5-7): Արձանագրություններն ընդարձակ չեն, պարունակում են պատվիրատուի անունը և իրեն կամ իր հարազատին աղոթքներում հիշելու խնդրանք-պատգամ: Նրանցից մե-

¹ Տվյալ տեսակի մեծ թվով դրամներ գտնվել են Հայաստանի տարբեր շրջաններում, իսկ վերջերս դրանց բավականին մեծ գանձ է հայտնաբերվել Ծաղկաձորի «Խաչեր» կոչվող հնավայրում: (Հովհաննիսյան, 2010, էջ 29-30)

² Խաչքարերը լուսանկարվել են Երվանդաշատի արշավախմբի անդամ Ա. Խեչոյանի կողմից:

կուն նշվում է ոմն Գինեպետ, որի անունը հանդիպում է նաև Բագարանի մեկ այլ արձանագրության մեջ: Վերջինս արված է գյուղի գերեզմանատան մոտ գտնվող բազալտե մեծաչափ քարի վրա, որի միայն արձանագիր մասն է հարթեցված: Գրությունն, ի տարբերություն վերոհիշյալ խաչքարի, ունի ստույգ թվական՝ 1297 թ. և հետևյալ բովանդակությունը. «ՉԽԶ. Կաման Այ. ես Գինեպետս Յովանիսի որդիս կանկնեցի զխայսս ի վերայ ամուսնոյ իմո Տիրամալրս ի բարեխաւս առ Քս. մեզ եւ ծնողաց մերոց»: Ամենայն հավանականությամբ երկու արձանագրություններում հիշատակված Գինեպետը նույն անձն է, ուստի առաջին խաչքարն էլ պետք է համարել XIII դ. 80–90-ական թթ. գործ: Մյուս երկու արձանագիր խաչքարերում հիշատակվում են Տեր Յովհաննեսը (XIII դ.) և ոմն Պատրիկ քահանա (1248 թ.)¹:

Ժամանակակից Երվանդաշատ գյուղի տարածքում նույնպես հայտնաբերվել են հասուն միջնադարին պատկանող հուշարձաններ: Ենթադրաբար XII-XIII դդ., այժմյան Երվանդաշատ գյուղի գերեզմանոցի տարածքում, կառուցվել է բազիլիկատիպ եկեղեցի, որից ներկայումս պահպանվել է միայն պատերի հիմքաշարը: Նույն տարածքում գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում գտնվել էին երեք խաչքարեր, որոնցից մեկի պատվանդանի արևելյան կողմի վրա առկա է XIII դ. առաջին կեսով թվագրվող, 11 տողից բաղկացած արձանագրություն: Նրանում ասվում է այս տարածքներում Շերանիկ իշխանին պատկանող այգու գնման մասին²: Հետաքրքրական է, որ նույն իշխանի անունը հիշատակվում է նաև Հոռոմոսի վանքի վիճագրերում, որոնք պատմում են նրա և իր ընտանիքի անդամների կողմից վանքին արված խոշոր նվիրատվությունների մասին (Летопись на камняхъ, 1913, с. 240, надп. № 109): Այժմ հիմքեր կան Ենթադրելու, որ XII-XIV դարերում մեզ հետաքրքրող տարածքները պատկանել են արձանագրություններում հիշատակված Շերանիկ իշխանին և նրա հետնորդներին: Հնարավոր է, որ նույն իշխանական ընտանիքին է պատկանել նաև պեղվող պալատական համալիրից ոչ հեռու՝ Արաքսի աջ ափի Ժայռերից մեկի գագաթին վեր խոյացող միջնադարյան ամրոցը (նկ. 9): Վերջինս կառուցվել է Խորենացու կողմից մանրամասն նկարագրված Երվանդ թագավորի անմատչելի ամրոցի հիմքերի վրա: Պահպանված միջնադարյան ամրոցը զբաղեցնում է ոչ մեծ տարածք, առանձնացված է Ժայռի բնական և արհեստական կտրվածքներով: Ներկայումս տեսանելի է նրա արևելյան պարսպապատը՝ պահպանված մոտ 10 մ բարձրությամբ (Тер-Мартirosов, 2008, с. 17-18): Այս խիստ հետաքրքրական հուշարձանի ուսումնասիրությունը նույնպես դեռևս անհնարին է, քանի որ այն գտնվում է Թուրքիայի տարածքում:

Երվանդ թագավորի որսորդական պալատի հնագիտական աշխատանքները ցույց տվեցին, որ հուշարձանի որոշ հատվածներում առկա է հասուն միջնադարին պատկանող մշակութային շերտ: Նախկին պալատի ավերակներն այդ ժամանակաշրջանում նորից բնակեցվել են, մասնավորապես կառույցի հյուսիսային մասում նոր մուտք է բացվել, որի հատակը ծածկվել է տուֆե սալաքարերով (նկ. 10): Մուտքից ոչ հեռու, շենքի կենտրոնական մասում միջին չափերի անմշակ քարերի անկանոն շարվածքով պատ է կառուցվել: Նույն շրջանում օգտագործվել է նաև պալատի

¹ Արձանագրությունները վերծանվել են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներ Գ. Սարգսյանի և Գ. Մելքոնյանի կողմից:

² Այս արձանագրությունը նույնպես վերծանվել է մեկնաբանվել է գիտաշխատողներ Գ. Սարգսյանի և Գ. Մելքոնյանի կողմից, ինչի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

արևելյան տնտեսական սենյակը, որտեղ փորվել է տնտեսական հոր 100-150 սմ խորությամբ: Վերջինս հուշարձանի տարածքում փաստագրված միջնադարյան մշակութային շերտերի առավելագույն խորությունն է: Միջնադարյան նյութ է գտնվել նաև պալատի հիմնական շենքից դուրս՝ նրանից հարավ գտնվող դարավանդների վրա և շենքից արևելք գտնվող հատվածում: Երվանդյան պալատի արևելյան պատից դուրս արտաշեսյան ժամանակաշրջանում կառուցվել է մեծ կարասային սրահ, 30-ից ավելի գինու կարասներով: Հետագայում, մ.թ. I դ. սրահի վրա սենյակներ են կառուցվել, որոնց տեղում էլ միջնադարում կառուցվել է կիսագետնափոր մի շինություն: Այստեղից գտնվել են խեցե ծխամորճի մի մաս, մարգարտե ուլունք և միջնադարյան խեցեղենի մի քանի նմուշներ:

Հուշարձանի տարբեր մասերից գտնված միջնադարյան խեցեղենը, տեղի չափազանց հարուստ անտիկ ժողովածուի համեմատ, խիստ սակավաթիվ է: Այս փաստը, ինչպես նաև միջնադարյան շերտի ոչ մեծ հաստությունը խոսում են այն մասին, որ միջնադարյան շրջանն այստեղ երկար չի տևել: Ելնելով խեցեղենի նմուշների առանձնահատկություններից՝ շերտը պետք է թվագրել XII-XIV դդ. սահմաններում: Գտնված հասարակ խեցեղենը ներկայացված է կարասների, թասերի, քրեղանների, կճուճների և խեցե կափարիչի նմուշներով: Կարասի մի նմուշ պատրաստված է կաթնա-դարչնագույն խոշոր հատիկավոր կավից, իսկ նրա պսակի ստորին մասը զարդարված է ալիքաձև թեք ելուստներով: Մյուս օրինակները մուգ շագանակագույն, նույնպես խոշոր ավազահատիկներով կավից պատրաստված, առանց անգործի թասերի և քրեղանների կտորներ են: Կճուճի բեկորը դրսից բաց դեղնա-դարչնագույն, կարմրավուն միջուկով խեցու նմուշ է: Հուշարձանից գտնվել են նաև ջնարակապատ գունավոր խեցեղենի նմուշներ: Դրանցից է, օրինակ, կաթնա-դարչնագույն խոշորից պատրաստված, ներսից ջնարակապատ, առանց շեշտված պսակի, փռված պատերով թասի բեկոր: Վերջինիս եզրամասով ընթանում է 2 սմ լայնությամբ, միջին մասից սև եզրագծով առանձնացված երկնագույն գոտի: Թասի միջին մասը սպիտակ է՝ սև անկանոն գծիկներով: Ջնարակապատ խեցեղենի մյուս նմուշներում հանդիպում են նաև դեղին, կանաչ և շագանակագույն ներկով արված նախշեր, սակայն կտորների փոքր չափսերը թույլ չեն տալիս պատկերացում կազմել անոթների ձևավորման ամբողջական հորինվածքի մասին: Հուշարձանից գտնված խեցեղենը և անոթների ձևերով, և գունազարդման ու ջնարակման եղանակներով ակնառու զուգահեռներ ունի Դվինի XII-XIII դդ. հարուստ միջնադարյան խեցեղենի հետ (ДВИН IV, 2008, с. 83, цв. табл. XV-XVIII, XXIX):

Հետաքրքրական է հուշարձանի արևելյան մասից գտնված ծխամորճի հատվածը, որը պատրաստված է մոխրա-դարչնագույն կավից և գլխիկի վրա ունի զուգահեռ ակոսներ: Նշենք նաև, որ նույնատիպ ծխամորճի ավելի ամբողջական մաս պատահական գտնվել է նաև Բագարան գյուղի տարածքում: Վերջինս պատրաստված է կարմրավուն մանրահատիկ կավից և գլխիկի վրա ունի մանր շեղ գծիկներից կազմված զուգահեռ ակոսների նախշազարդ: Նույնատիպ երկու գիծ գլխիկի ետևում հատվում են՝ կազմելով սուր անկյուն և ընդգծելով կոթունի ու գլխիկի հատման մասը (նկ. 13): Ինչպես վերը նշվեց, առաջին ծխամորճը գտնվել էր XII-XIV դդ. թվագրվող խեցեղենի հետ միասին, ինչի հիման վրա էլ այն թվագրվել էր նույն ժամանակահատվածով, ավելի ստույգ՝ XIV դարով: Հայաստանի տարածքից գտնված (Գառնիից, Լոռե և Բջնի ամրոցներից, Դովրի և այլ հնավայրերից) ծխամորճերի վեր-

ջին տարիների ուսումնասիրությունները, մասնավորապես Լոռե բերդաքաղաքից գտնված մի քանի տասնյակի հասնող ծխամորճերի մանրամասն քննությունը թույլ է տվել Ի. Ղարիբյանին վերջիններս ստույգ թվագրել XIII-XIV դդ. (Ղարիբյան, 2009, էջ 215-217, աղ. XLV-XLVI): Մեր երկու օրինակներն իրենց ձևերով, տեխնիկական և գեղարվեստական առանձնահատկություններով նույնանուն են Լոռեից հայտնաբերված հնագետ Ի. Ղարիբյանի կողմից նկարագրված օրինակներին, ինչը հաստատում է դրանց թվագրությունը XIV դ.¹:

Երվանդ թագավորի հիմնած ծիսական քաղաք Բագարանը, ինչպես վերը նշվեց, գտնվում էր Երվանդի անառիկ ամրոցից մոտ 8 կմ հյուսիս-արևելք, Ախուրյանի աջ ափին վեր խոյացող ժայռոտ բարձունքի վրա: Այստեղ պատմական Բագարանի հնագույն մասն է, նրա միջնաբերդը, որից ներքև դեպի գետն իջնող լանջերի վրա տարածվում էր քաղաքի մնացած մասը: Այսօր էլ հստակ երևում են միջնաբերդի աստիճանաձև հարթակները: Բագարանի տարածքում Ախուրյանը հոսում է նեղ և ոլորապտույտ կիրճով և բնակատեղին ամբողջությամբ շրջապատված է ժայռոտ լանջերով: Այժմ պատմական Բագարանի հիմնական մասը Թուրքիայի տարածքում է: Նույնանուն հայկական գյուղն այստեղ գոյություն է ունեցել մինչև 1918-20 թթ., երբ վերջինիս բնակիչները գաղթել և վերաբնակվել են ներկայիս Բագարան և մասամբ Երվանդաշատ գյուղերում: Հին Բագարանի տեղում այժմ քրդական գյուղ է:

Բագարանի միջնաբերդը և շրջակա տարածքները ժամանակին ուսումնասիրել է Թ. Թորամանյանը, և մենք կարող ենք այժմ հիմնվել միայն նրա հաղորդած տվյալների և բնիկ բագարանցիների որոշ տեղեկությունների վրա: Նա նշում է, որ այդ քարքարոտ ծորի առավելություններից մեկը բազմաթիվ անարատ աղբյուրներն են և տեղանքի ժայռերով պատսպարված բնական անառիկությունը²: Միջնաբերդի տարածքում Թ. Թորամանյանը հայտնաբերել է մեծաչափ որձաքարերով շարված պարսպապատերի հիմքեր՝ մինչև 2,5 մ հաստությամբ, և պարսպապատերից ներս ընկած տարածքում՝ բնակարանների մնացորդներ: Ըստ հեղինակի միջնաբերդի պարսպապատերն իրենց կիսակլոր աշտարակներով պետք է որ պատկանեն X-XI դդ., չնայած որ հեղինակը փաստում է բազմաթիվ տեղերում պահպանված շատ ավելի հին շարվածքների գոյությունը: Որոշ մասերում ակնառու են հին պատերի հիմքերի վրա Բագարատունիների շրջանում կառուցված պատերի հատվածներ: Սակայն ինքը՝ ճարտարապետը նշում է, որ քաղաքի ճարտարապետության և նրա ժամանակագրության մասին ճշգրիտ գիտելիքներ ձեռք բերելու համար անհրաժեշտ է այստեղ պեղումներ կատարել (Թորամանյան, 1942, էջ 229-231): Այսօր եղած տեղեկությունների հիման վրա կարող ենք միայն նշել, որ Բագարանում վաղագույն մշակութային շերտը պետք է պատկանի առնվազն Երվանդ թագավորի ժամանակաշրջանին՝ մ.թ.ա. III դ. վերջ - II դ. սկիզբ:

Բագարանի վաղմիջնադարյան ժամանակաշրջանին է պատկանում հայտնի Սբ. Թեոդորոս եկեղեցին, որը գտնվում էր քաղաքի միջնաբերդի հարավային ծայրին: Տաճարն ունեցել է շինարարական արձանագրություն, ըստ որի այն սկսել է կառու-

¹ Հայաստանում և Անդրկովկասում գտնված ծխամորճերի թվագրության հարցում այսօր մասնագետները միակարծիք չեն, նրանց մի մասը գտնում է, որ տարածաշրջանում ծխամորճերը գործածվել են XVI դ. ոչ շուտ (Բաբայան, 1996, էջ 33-34):

² Տարածքում եղել են բազմաթիվ քարանձավներ, որոնցից մեկը բնակիչներին ծառայել է որպես սառնարան: Նրա մուտքը ուղղված է եղել հյուսիս և նրանում կուտակված սառույցը չի հալվել տարվա բոլոր եղանակներին: Տարեց բնիկ բագարացիներն այդ քարանձավն այժմ էլ հիշում են և անվանում են «Պզանոց»:

ցել իշխան Բուտ Առավելյանը 624 թ., իսկ նրա մահից հետո շինարարությունն ավարտին է հասցրել նրա կինը՝ Աննան, 631 թ. (Орбели, 1963, с. 393): Տաճարը մանրամասն հետազոտվել և չափագրվել է Թ. Թորամանյանի կողմից անցած դարասկզբին, երբ եկեղեցին դեռ կանգուն էր առանց գմբեթի (Թորամանյան, 1942, էջ 232-236): Հետագայում տաճարի հատակագծային և ծավալատարածական առանձնահատկությունների քննությանն անդրադարձել են հայ ճարտարապետությամբ զբաղվող գրեթե բոլոր մասնագետները (Ն. Տոկարսկին, Վ. Հարությունյանը, Ս. Սաֆարյանը, Ստ. Մնացականյանը և այլն): Սբ. Թեոդորոսը քառանույթ, դուրս շեշտված չորս աբսիդներով կենտրոնագմբեթ եկեղեցի է՝ էջմիածնի Մայր տաճարի ճարտարապետական տիպի զարգացած օրինակներից մեկը: Նրա ներքին տարածության մեջ խիստ շեշտված են եղել խաչածառությունը և ծավալների ուղղահայացությունը, իսկ արտաքինից տաճարը բաղկացած է եղել երեք հարկաբաժիններից, որոնք աստիճանաբար նեղացող ծավալներով բարձրացել են դեպի գմբեթը: Եկեղեցու երկու արևելյան ավանդատները հետագա հավելումներ են, ըստ դրա էլ Ստ. Մնացականյանը ենթադրում է, որ տաճարը, սկզբնապես չունենալով ավանդատներ՝ ունեցել է մենորիալ նշանակություն (Мнацаканян, 1989, с. 107): Բագարանի տաճարը առանցքային տեղ է զբաղեցնում VII դ. հայկական, ինչպես նաև արևելաքրիստոնեական ճարտարապետության մեջ (Казарян, 2007, с. 130-135, 166-167, ил. 122-124): Ցավոք, այժմ կառույցը լիովին ավերված է:

IX դ. երկրորդ կեսից Բագարանը կարճ ժամանակով եղել է Բագրատունիների նորաստեղծ պետության մայրաքաղաք, որտեղ 885 թ. տեղի է ունեցել Բագրատունի առաջին թագավոր Աշոտ Ա-ի թագադրությունը (Դրասխանակերտցի, 1912, 137-139, Մաթևոսյան, 1997, էջ 23, 87-88), իսկ հետագայում այստեղ է գտնվել Բագրատունիների տոհմական դամբարանը: Բագրատունիների օրոք միջնաբերդի հյուսիսային մասում, ըստ ավանդության, Գևորգ Մարզպետունու գերեզմանի վրա է կառուցվել Սբ. Գևորգ եկեղեցին: Նրա հիմնադրման թվականը հայտնի չէ, սակայն եկեղեցու վրա առկա արձանագրությունները վերաբերում են IX-XI դդ. (Ալիշան, 1890, էջ 66-69): Կառույցն այժմ տեսանելի է Ախուրյանի ձախ ավերակից և ներկայացնում է կարմրավուն տուֆից, բազիլիկ հորինվածքով շինություն: Եկեղեցու ներկայիս տեսքը XIX դ. նրա հիմնարար վերաշինության արդյունք պետք է համարել: Միջնաբերդի տարածքում՝ Սբ. Թեոդորոսի մոտ, Թորամանյանը նշում է ևս մեկ ոչ մեծ չափերի եկեղեցի, որը ամբողջովին կանգուն է եղել հեղինակի Բագարան այցելությունից մի քանի տարի առաջ, սակայն քանդվել է մի տեղացի հարուստ վաշխառուի կողմից՝ իր անձնական շինարարությունը որակյալ քարով ապահովելու համար (Թորամանյան, 1942, էջ 231):

Բագարանի դիմաց, Ախուրյանի ձախ ավի ժայռոտ բլուրի վրա, կանգուն է փոքրիկ Սբ. Շուշանիկ եկեղեցին¹ (նկ. 8): Եկեղեցին պատմական Բագարանի այն փոքրաթիվ հուշարձաններից է, որոնք այժմ գտնվում են ՀՀ տարածքում: Գտնվելով դժվարանցանելի և սահմանամերձ տեղանքում՝ Սբ. Շուշանիկը բավարար ուսում-

¹ Սբ. Շուշանիկը հայ և վրաց եկեղեցիների սրբերից է (ծնվ. մոտ 409 թ.), Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի դուստրը, Գուգարքի Վազգեն բղեշխի կինը: Շուշանիկը ըմբոստացել է ամուսնու՝ քրիստոնեությունն ուրանալու և զրադաշտականություն ընդունելու դեմ և վերջինիս կողմից անընդմեջ ենթարկվել սպառնալիքների ու չարչարանների: Գրեթե վեց տարվա բանտարկությունից հետո Շուշանիկը հավատարիմ է մնում իր հավատքին և նահատակվում 475 թ.: Շուշանիկը թաղվել է Տփղիսի միջնաբերդի տարածքում (Մուրադյան, 2002, էջ 828-829):

նասիրության և պահպանության չի արժանացել և այժմ շտապ վերակառուցման կարիք ունի: Եկեղեցին հետազոտվել է 1980-ական թթ. ճարտարապետ Կարինե Դանիելյանի կողմից (Դանիելյան, 1985, էջ 13-15)¹: Սբ. Շուշանիկը վեցանկյուն հատակագծով կենտրոնազմբեթ կառույց է, շինանյութը կարմրավուն տուֆն է, ծածկը արվել է կղմինդրով: Կառույցի բարձրությունը հատակից մինչև գմբեթի գագաթը 8,0 մետր է, գմբեթի տրամագիծը՝ 2,7 մ. է, պատերի հաստությունը՝ 0,7 մ.: Սբ. Շուշանիկին կից կան ևս մեկ քառախորան եկեղեցու հիմքեր, կլոր աշտարակով պարսպապատի մոտ 4 մ բարձրությամբ պահպանված հատված և այլ կառույցների հետքեր: Ըստ Կ. Դանիելյանի, Սբ. Շուշանիկը հարակից կառույցների հետ միասին կազմել է վանական համալիր: Եկեղեցին արևմտյան հիմնական մուտքի (հետազայում փակված) վերևում ունի շինարարական արձանագրություն, որը, սակայն, եղծված է և անընթեռնելի: Թ. Թորամանյանը ենթադրում է, որ եկեղեցին հիմնադրվել է XI դ. ում²: Կ. Դանիելյանը քննելով կառույցի ճարտարապետական առանձնահատկությունները և հիմք ընդունելով Յովհ. Դրասխանակերտցու վկայությունը Բագարանում՝ Ախուրյանի վրա Շապուհի որդի Աշոտ Բագրատունու կողմից մի պերճաշուք եկեղեցու շինության մասին, եզրակացնում է, որ Սբ. Շուշանիկը կառուցվել է վերջինիս կողմից X դ. առաջին քառորդում (Դանիելյան, 1985, էջ 15):

Երվանդաշատի արշավախմբի հետախուզական աշխատանքները ուղղված էին նաև Երվանդաշատ գյուղից արևելք և հարավ ընկած տեղանքի՝ Արաքսի ձախ ափով ձգվող բարձրադիր տարածքների ուսումնասիրությանը³: Գտվել են տասնյակից ավելի բնակատեղիների կամ առանձին կառույցների հետքեր, որոնց գերակշիռ մասը միջնադարյան են: Տեղում հավաքված և քննված վերգետնյա նյութը թվագրվում է VI-VII դդ.-ից մինչև ուշմիջնադարյան ժամանակաշրջանով (բացառությամբ մի խումբ անտիկ խեցեղենի նմուշների): Հատկանշական են դարչնագույն, սև ավազահատիկներով խեցու կտորները, որոնց վրա սանրանման գործիքով գծեր են քաշված, ինչպես նաև դուրզի վրա պատրաստված կարմրավուն, մոխրա-դարչնագույն խեցեղենի նմուշները (նկ. 15, 16): Ուշ միջնադարյան խեցեղենից հարկ է նշել անոթի ներսից կապույտ և դեղնա-դարչնագույն ջնարակապատ խեցու նմուշները:

Տարածքի առավել հետաքրքրական հուշարձաններից է Շահվառուտ կոչվող ամրոց-բնակատեղին, որը գտնվում է Երվանդաշատ գյուղից մոտ 7 կմ հարավ-արևելք, Արաքսի ձախ ափի ժայռոտ բարձունքի վրա: Հուշարձանը դեռ պեղված չէ, սակայն ըստ նախնական դիտարկումների այն պետք է թվագրել VII-X դդ.: Շահվառուտի ամրոցից գտնված վերգետնյա նյութից պետք է նշել բաց դեղնա-դարչնագույն խեցու կտորները, որոնց վրա առկա են 0,7 սմ լայնքով, թույլ արտահայտված ժապավենածն գծեր (նկ. 14): Վերջիններս ընթանում են անոթի լայնական առանցքով և վկայում

¹ 2010 թ. հոկտեմբերին Բագարան կատարած մեր այցելության ժամանակ կառույցը ավելի վառ վիճակում էր, քան այն նկարագրված է Կ. Դանիելյանի ուսումնասիրության մեջ: Պատերի և գմբեթի շարվածքներում կային բազմաթիվ ճաքեր և թափված քարերից գոյացած անցքեր: Եկեղեցին պատված է հրազենի կրակոցների բազմաթիվ հետքերով և մերօրյա գրառումներով ու փորագրություններով:

² Թ. Թորամանյանը նաև մի գեղեցիկ ավանդագրույց է բերում Սբ. Շուշանիկի կառուցման մասին. «Ժողովրդյան մեջ ավանդություն կա այս եկեղեցիի շինության առթիվ: Որպես թե թագավորին աղջիկը կբնակեր ջուրին անդիի ափին վրա և ամեն օր այս կողմը եկեղեցի կուզար: Մի օր այլ կամուրջը ջուրը տարեր է և թագավորին աղջիկը մնացեր է առանց ժամ ու պատարագի: Ասոր վրա հրամայեր է իր պալատին մոտիկ շինել այս փոքրիկ եկեղեցին, որպեսզի անգամ մը այլ հեղեղի և կամ կամուրջի պատճառով չզրկվի սրբազան արարողությունների» (Թորամանյան, 1942, էջ 232):

³ Հիմնական հետախուզական աշխատանքները կատարվել են Երվանդաշատի արշավախմբի անդամ Ա. Խեչոյանի կողմից:

են նրա դուրզի վրա պատրաստված լինելը: Նմանատիպ խեցեղենի նմուշներ գտնվել են նաև տեղանքի հետախուզվող այլ տարածքներից:

Արշավախմբի 2009 թ. աշխատանքների ընթացքում հետազոտվել և չափագրվել է ևս մեկ միջնադարյան հուշարձան Երվանդաշատ գյուղի հարավարևելյան ծայրամասում, գյուղի արևելքից երիզող սարահարթի լանջին (Ոկ. 4): Ըստ վերգետնյա նյութի այն նույնպես պետք է թվագրել VII-X դդ.-ով: Կառույցը պահպանվել է 2-3 շարք քարե եռաշերտ շարվածքի բարձրությամբ, որը բաղկացած է երկու շարք անմշակ քարերով արված արտաքին, և մանր քարից ու կավե լիցքից բաղկացած միջին շերտերից: Հատակագծում կառույցը ներկայացնում է հյուսիսից հարավ ձգված անհամաչափ սեղանաձև սրահ (չափերը. 23 մ՝ արևելյան, 24 մ՝ արևմտյան, 16 մ՝ հյուսիսային պատերը և 8 մ՝ հարավային կողմը), որի արևելյան պատին կից կան երկու ավելի փոքր ուղղանկյունաձև սենյակներ: Սրահի մուտքի հարավային կողմում պատի հետքեր չկան և այն երկու անգամ ավելի կարճ է ետևի՝ հյուսիսային պատից: Կառույցին կից և նրա մոտակայքում կան կիսակլոր կամ կլոր հատակագծով շինությունների մնացորդներ՝ մոտ 5 մ տրամագծով: Հուշարձանի նշանակությունը դեռևս ստույգ չէ, հավանաբար այն եղել է առանձին ամրացված կալվածք՝ այգեգործական և անասնապահական տնտեսությամբ: Հուշարձանն արժեքավոր է իր եզակիությամբ, իսկ նրա վերջնական ստույգ նշանակությունը հնարավոր կլինի պարզել շրջակայքում մյուս միջնադարյան կառույցների ուսումնասիրության ընթացքում, որոնք առկա են մոտակայքում և փաստագրվել են արշավախմբի կողմից:

Երվանդաշատում տարվող վերջին մի քանի տարիների հնագիտական աշխատանքներն ուղղված են հիմնականում Երվանդ թագավորի պալատական կառույցի ուսումնասիրությանը: Սակայն արշավախմբի կողմից կարևորվել են նաև տեղի միջնադարյան շրջանի հուշարձանների հետազոտությունները: Արշարունիքը և նրան սահմանակից Շիրակ գավառները վաղմիջնադարյան Հայաստանի պատմաքաղաքական և մշակութային կյանքում ունեցել են նշանակալի ու առաջնային դեր: Դրա մասին են վկայում Երվանդաշատից մինչ Անի ձգվող, Ախուրյանի ավազանի տարածքում կառուցված մի շարք խոշոր վաղմիջնադարյան հուշարձանները՝ Բագարանի Սբ. Թեոդորոսը, նույն VII դ. կեսերին կառուցված, վերջինից ընդամենը 4-5 կմ հյուսիս գտնվող Մրենի տաճարը, Արագածավանի վեցաբսիդ եկեղեցին (VII դ.), ինչպես նաև Երեբունի (V դ.), Տեկորի (VI դ.), Թալինի (VII դ.) մեծ տաճարները և այլն: Վաղ միջնադարում այստեղ Կամսարականների և այլ իշխանների շինարարական ակտիվ գործունեությունը IX դ. փոխարինվում է Բագրատունիների ոչ պակաս աշխույժ քաղաքական ու մշակութային գործունեությամբ: Այս ամենը պայմանավորված էր հիշյալ տարածքների տեղադրությամբ Ախուրյանի և Արաքսի ավազաններով անցնող կարևոր առևտրական ուղիների վրա, ինչպես նաև ժամանակի ամրոցաշինության և քաղաքաշինության համար նպաստավոր պայմաններով:

Տարածաշրջանի միջնադարյան շրջանի հնագիտական ուսումնասիրությունները խոստումնալից են հատկապես քաղաքացիական ճարտարապետության ասպարեզում, ինչպես նաև Հայաստանի վաղմիջնադարյան խեցեղենի տիպաբանական և գեղարվեստական առանձնահատկությունների անհրաժեշտ հստակեցումների համար:

Գրականություն

1. **Խորենացի Մ.**, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Եր., «Հայաստան» հրատ., 1968, 420 էջ:
2. **Բյուզանդ Փ.**, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Եր., «Հայաստան» հրատ., 1968, 350 էջ:
3. **Դրասխանակերտցի Յովհ.**, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, Էլէքտրատպ. օր. Ն. Աղանեանի, 1912, 427 էջ:
4. **Ալիշան Ղ.**, Այրարատ: Բնաշխարհի Հայաստանեայց, Վեներտիկ - Ս. Ղազար, Մ. Մխիթարեան, 1890, 590 էջ, 1 ներդ. թ. քարտեզ:
5. **Ալիշան Ղ.**, Շիրակ: Տեղագրութիւն պատկերացոյց, Վեներտիկ - Ս. Ղազար, Մ. Մխիթարեան, 1881, 189 էջ, 3 ծավլ. թ. քարտեզ:
6. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, (Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Յ. Խ.), հ. I, 1986, Եր., Երևանի համալսարանի հրատ., 992 էջ:
7. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, (Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Յ. Խ.), հ. II, 1988, Եր., Երևանի համալսարանի հրատ., 992 էջ:
8. **Առաքելյան Բ. Ն.** Որտեղ են գտնվել Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքները, «Պատմաբանասիրական հանդես», Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1965/3, էջ 83-94:
9. **Բաբայան Ֆր.**, Հառիժի վանքահամալիրում հայտնաբերված ծխամորժերի թվագրության հարցի շուրջ, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական երկրորդ գիտաժողով, զեկուցումների թեզիսներ, Գյումրի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 1996, էջ 33-34:
10. **Դանիելյան Կ.**, Բագարանի Ս. Աստվածածին եկեղեցին, «Գիտություն և տեխնիկա», Եր., ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, 1985/7, էջ 13-15:
11. **Թորամանյան Թ.**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. I, Եր., «Արմֆանի» հրատ., 1942, 398 էջ:
12. **Հովհաննիսյան Հ.**, XI դարի բյուզանդական պղնձե դրամների գանձ Ծաղկածորից, «Հայաստանի և հարակից երկրների ազգաբանություն և հնագիտություն» երիտասարդ գիտնականների 12-րդ գիտաժողովի զեկույցների ամփոփագրեր, Եր., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2010, էջ 29-30:
13. **Ղարիբյան Ի. Գ.**, Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, 282 էջ:
14. **Մաթևոսյան Ռ. Ի.**, Բագրատունիներ: Պատմա-տոհմաբանական հանրագիտարան, Եր., «Անահիտ» հրատ., 1997, 135 էջ:
15. **Մուրադյան Պ. Մ.**, Շուշանիկ, «Քրիստոնյա Հայաստան» Հանրագիտարան, Եր., Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 2002, 1076 էջ, նկ., քարտեզ:

16. Պետրոսյան Յ. Լ., Խաչքար: Ծաղունը, գործառնություն, փաստվերագրությունը, իմաստաբանությունը, Եր., «Փրինսիփն», 2008, 406 էջ:
17. Двин. IV. Город Двин и его раскопки (1981-1985 гг.). Ред. Калантарян А. А., Ер., изд. «Гитутюн» НАН РА, 2008, 244 с., таб.
18. Казарян А. Ю., Кафедральный собор Сурб Эчмиадзин и восточнохристианское зодчество IV-VII веков. М. «Locus Standi», 2007, 216 с., ил.
19. Летопись на камнях. Собрание-указатель Армянских надписей, Составитель К. Костянянц. С. Петербург. Типография Императорской Академии наук, 1913, 294 с.
20. Мнацаканян С. Х., Крестовокупольные композиции Армении и Византии V-VII веков, Ер., изд. АН Армянской ССР, 1989, 150 с., ил.
21. Орбели И. А., Надпись 631 года о построении Багаванской церкви, Орбели И. А., Избранные труды, Ер., изд. АН Армянской ССР, 1963, 684 с.
22. Тер-Мартirosов Ф. И., Ервандашат, Историко-филологический журнал, Ер., изд. НАН РА, 2008/1, с. 3-19.
23. Тер-Мартirosов Ф. И., Ервандашат, Ервандакерт, Ервандаван. Топография, типология, эпоха. Третий всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке. Ер., изд. АН Армянской ССР, 1986, с. 83-85.
24. Тер-Мартirosов Ф. И., Город. Термин и градостроительная структура в истории Армении, «Архитектура и строительство», Ер. «Միդիս-Շար», 2009/12., с. 50-55.

Микаелян Лилит, *Средневековые памятники Ервандашата согласно историческим источникам и новейшим археологическим исследованиям* - На территории села Ервандашат Армавирского района с 2005-2012 г. ведутся систематические археологические раскопки, направленные на изучение охотничьего дворца царя Ерванда, основанного в III в. до н. э. Помимо раскопок на месте дворца, экспедицией проводятся работы по выявлению и исследованию многочисленных средневековых памятников на территории села и близлежащей местности. В некоторых частях раскопа дворца был зафиксирован средневековый слой XII-XIV вв., были изучены более десятка хачкаров в окрестностях соседнего села Багаран, а также проведены предварительные исследования и обмеры развалин средневековых построек в данном регионе.

Michaelyan Lilit, *Medieval monuments of Yervandashat according to historical sources and newest archaeological studies* - Since 2005-2012 systematic annual excavations of the palace of King Yervand (founded in the III century BC) are realized in Yervandashat village in Armavir Province. In addition to the excavations of the palace site, separate expedition carries out surveys and investigations of medieval monuments in the village and nearby areas. Medieval layer of XII-XIV centuries was fixed in some parts of the excavation of the palace. More than dozen khachkars were studied in the vicinity of the neighboring village Bagaran, as well as realized preliminary studies and measurements of the ruins of medieval buildings in the region.

